

ՀՏ 398.1(479.342)

Բանահյուսություն

## ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԵՔՆԵՐԸ Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ «ՆՇԱՄԱՐՆԵՐ...»-ՈՒՄ Անական Առաջարկ

*Այդ ժողովուրդը ունի դարերի խաչուղիներում մարդ արարածի ձեզը բերած բոլոր յավագույն հասկանիշները. ազնվություն, ուղամտություն, վեհանձնություն, հյուրամեծարություն...*  
**Լ. Հարությունյան**

**Բանակի քառեր՝** ժողովրդական բանահյուսություն, ազգագրություն, պատմություն, բարոյական արժեքներ, ժանրեր, հայկական օջախ, ժողովածու, աստվածապատճերուն, նշանական, մարդասիրություն, բանահավաք.

**Ключевые слова:** фольклор, этнография, история, моральные ценности, жанры, армянский очаг, сборник, богослужение, религия, гуманизм, фольклорист

**Keywords:** folklore, ethnography, history, moral values, genres, Armenian hearth, collection, Godliness,relic, humanism, folklorist.

### Ա.Ատայն

#### “Моральные ценности в “Реликвиях” ... Л. Арутюняна”

В многочисленных фольклорных жанрах Л. Арутюнян раскрывает житье, быт, семейные традиции, высокие моральные критерии арцахца, его богослужение и поклонение Богу.

Каждая сфера общественной жизни имела свои законы, связанные с честью, любовью к очагу, а любовь – это основная мораль арцахца.

Изучению этих и подобных вопросов относится исследование собранных и записанных Левоном Арутюняном различных жанров фольклора.

### A. Atayan

#### “Moral Values in Relics” by L. Harutyunyan”.

In numerous folklore genres L. Harutyunyan reveals habitation, mode of life, family traditions, high moral criteria of Artsakh people, their worship of God and Godliness.

Every sphere of social life had its own laws related to honour and love to hearth, and love is the main moral of Artsakh people.

The investigation of different folklore genres, collected and recoded by Levon Harutyunyan, refers to the study of these and similar issues.

Բանահյուսական բազմաթիվ ժանրերում Լ. Հարությունյանը բացահայտում է արգախոր կյանքն ու կենցաղը, լստանելկան ավանդույթները, բարոյական բարձր արժեքները, աստվածասիրությունն ու աստվածապատճերությունը:

Հասարակական կյանքի յուրաքանչյուր բնագավառ ունեցել է իր օրենքներ՝ կապված արգախոր պատվի, հայրենասիրության հետ: Սերը արցախոր զիշավոր բարոյական արժեքն է:

Այս և նման հարցերի լուսումնապիրությանն է վերաբերում Լ. Հարությունյանի հավաքած ու գրի առած բանահյուսական տարբեր ժանրերի բնությունը:

Ժողովրդական բանահյուսությունը ժողովրդի մտավոր աշխարհի ու հոգևոր կյանքի անխարդախ հայելին է: Ջևու ու բովանդակությամբ այն բարձրարժեր ու կատարյալ ստեղծագործություն է, կարևոր և ուսանելի, մարդկային վսեմազույն արժանիքների գովք, միաժամանակ պայքար դաժան ու բիրս իրականության, չարիքի, մարդկային բնագործության բացասական գծերի դեմ:

Հայ բանագիտության պատմության մեջ Արցախի ժողովրդական բանահյուսության գիտական ուսումնասիրության, գրի առնման և մասայականացման գործում անզնահատելի է Լ. Հարությունյանի դեմքը: Նրա «Նշանական Արցախի բանահյուսության» 5 հատորներում, «Կաթնակորեն» ժողովագիտություն բազմակողմանի ու լայն ընդգրկումով զետեղված են հեղինակի հավաքած ազգագրական բանահյուսական-պատմական նյութերը:

Ուսումնասիրությունները պարզում են, որ Արցախի բանահյուսական ժառանգությունը թնմատիկ առումով բազմազան է, ունի միջազգային բանագիտությանն առնչվող թեմաներ, բայց նրա հատկանշական կողմը ինքնուրույնն է, տեղականը, ուրեմն և անկրկնելին: 5 ժողովածուների առանցքը գրառված նյութերի մարդկայնորեն վեհին ու գեղեցիկն ընդգրկող արժեքն է: Մարդկային գեղեցիկ

արժեքների կենտրոնում արցախցու սերն է Աստծո հանդեպ, նրա երկյուղածությունն ու հավատը, որ գալիս են դարների խորքից՝ բացահայտելու նրա հոգու մաքրությունը, ապրելու տեսչը, գոյատևելու իրավունքը.

Ցավու Աստծու տվե՛

Աստուծ հայացավ...<sup>1</sup>

Արցախցու անսահման աստվածապաշտության մասին կարդում ենք Լ. Հարությունյանի «Նշխարների» առաջին գրքի առաջաբանում.

- Ղարաբաղցին պաշտում է Աստծուն՝ որպես իր երկվորյակի, իր շնորհակցի, միշտ էլ օրինակ ունենալով նրան, նրա մեջ փնտրելով լավին ու կատարյալին: Հայ աշխատավորը Աստծո անվան հետ էր կապում մարդկային բարօրության հոլյու և պատճե ատիթով աղաչում էր, որ մեղքանա ու սատար լինի նրանց, ովքեր նեղ օրում են: Նա Աստծո գաղափարի մեջ է դրել նաև դեկափարի, առաջնորդի, զորափարի հանդեպ իր իդեալը: Նրա չգոյության մեջ է նա տեսել իր դարավոր երազանքների, հավատի փլուզումը: «Աստուծ հիշքան կենչան ա ըլալ, մունք մոնեխ չընք ըլալ, ես մին ոշխարքաս սաղ սալամաթ քնիխընք ըլալ էն մին աշխարհըք»<sup>2</sup>:

Ղարաբաղցին աշխարհի հետ կապվում է առաջին հերթին Աստծո միջոցով, ապա՝ ծառի, ծաղկի, արևի, լուսնի, գիշերվա...»

Թերևս այս կապից են հենց սկիզբ առել մարդկային արժեքների արցախցան բարոյական չափանիշները:

Ահա թե ինչու Լ. Հարությունյանի 5 «Նշխարներում» շնչտվում է արցախցու բարձապաշտությունը, հյուրամեծարությունը, ազնիվ, պարզ ու անխարդախ ոգին:

Արցախ աշխարհը պատմական հայաստանի այն հատվածն է, որը երկար է պահպանվել հեթանոսությունը: Այդ են վկայում նաև Լ. Հարությունյանի՝ հեթանոսական կյանքին ու կենցաղին վերաբերող նշխարների մեկնությունները:

- Մեր սովորությունները բախտավոր ժամանակների ծնունդ են, դարների մեջ ամրակայված ու սրբացված, եթերային սիրով ջրդեղված են, իրենց ակունքներով մաքուր ու ժողովրդական, բոլորի կողմից ընդունված ու սիրելի,- գրում է հենդինակը:

Արցախցու մարդասիրությունը սկսվում է կյանքի, բնության, Աստծո հանդեպ նրա երկյուղածությունից ու հավատից: «Աստծու անա մնջը էիսա Աստվածնա», - ասում է արցախցին՝ իր բազում ասույթներում արտահայտելով իր ապավինելն Աստծուն:

«Մոր կշնորը» փորբեկ գրուցում նոր բալիկ ծնած ջահել մայրը տան-դրան նդած ամբողջ բարիքը հանում-փոռում է իր շուրջը և վերցնում-ձգում մկշնորը:<sup>3</sup>

Նա խնդրում է Աստծուն՝ ողորմել իրեն, որովհետև արդար չի եղել բաժանելիս, որդու փայր շատ է արել: Մոր աստվածապաշտությունը անսահման է, նա ամեն բովես ապավինում է Աստծուն՝ խնդրելով պահել-պահպանել իր օջախն ու զավակներին:

Արցախցին սիրում է մարդուն, վատ մարդու մասին ասում է «հոգու մեջ քարե սանդ և նստած»: «Փորբեկ հարցագրույց» էջը բացահայտում է բարի մարդու առենդվածը:

- Ո՞վ է, որ իրավունք չունի ապրելու մարդկանց մեջ:

- Ժողովրդին դավող, նրան ճնշրող ու պառակտող, դեպի ստրկություն մղող մարդը:

- Ո՞վ է այն մարդը, որ աստվածանալու շնորի ու արժանավորություն ունի ապրողների մեջ:

- Բարի մարդը: Նա վսեմության զավակն է: Բարությունը մի արժանիք է, որի շնորհիվ միայն կարող է փրկվել մարդկային ցնդը վերահաս կորստից: Բարության հաղթանակը անմարդկայինի կորուստն է,<sup>4</sup> - կարում ենք «Նշխարներ...»-ի 5-րդ գրում:

Լ. Հարությունյանի «Նշխարներում» մարդու անմահության, նրա լավ գործի փառաբանման գնդեցիկ նմուշներ շատ կան: Վկան՝ «Չովուշ Ակուփի խոսքները», «Չոնթու խաղները», որոնք ճիշտ ապրելու, մարդասիրության, մարդկային բարոյականության գովք են: Ճիշտ ապրելու տուտը բռնելու ճիզ ու

<sup>1</sup> Լ. Հարությունյան, Նշխարներ, գիրք 3, Ստ. 2007, էջ 10:

<sup>2</sup> Լ. Հարությունյան, Առաջին գիրք, 1991, էջ 10:

<sup>3</sup> «Նշխարներ...», հ. 5, 2011թ. էջ 7:

<sup>4</sup> Նոյն տեղում, էջ 12:

ջանքով է արցախցին գոյատևում: Նա կյանքի նրանութեանը գնահատելիս անզիջում է թուլամորթեանը, անաշխատունակների հանդեպ: Նրա կամքն անկրտուն է՝ կռո, որի համար էլ հաղթահարում է բոլոր դժվարությունները:

Արգախի բանահյուսությունը ընդգրկուն է: Այն մեծ տեղ է տալիս ընտանիքի դերին ու նշանակությանը: «Նույն ի վեր դարաբաղցին աչքի է ընկել բարոյականության բարձր նորմերով: Սովորություններից յուրաքանչյուրը կապվել է բարձր բարոյականության հետ: Հասարակական կյանքի յուրաքանչյուր բնագավառ ունեցել է իր կանոնարկված օրենքը՝ կապված պատվի, պատվախնդրության, օջախափրության, ընտանեսիրության հետ: Մերը արցախցու բարոյականության հիմքն է:»

«Անք ինքն իրեն կգա: Կգա մանկան ճիշճրով, հարսի ամոթխածությամբ, բարեկամությամբ, ամուսնական մահճի նկատմամբ պարտականության չգրված օրենքով»:

Բանահյուսական բազմաթիվ կտորներում մենք տեսնում ենք հարազատություն, երկնային ջերմության առկայություն ընտանեկան հարաբերություններում: Սիրո մեջ հաշտվողականության զարդարը չի ընդունում դարաբարցին, որովհետև դեպի հավերժական սիրո զարդարը է ձգտում նա: Սիրածի հետ միայն պետք է ամուսնանալ: Կինը «ղաշանգ» պիտի լինի, «ղաշանգներեն մաշին ամենահաշանգը, սերուններեն մաշին ամենասերունը: Բայց և ընդունում է, որ կինը հոգեպես պիտի գեղեցիկ լինի, այլապես ում է պետք նրա շքնար գեղեցկությունը:»

«Ղնդոթունը սարու ծյուն ա, սարը բդի ղաշանգ: Կամ էլ ղաշանգն ասումա՝ ինձ հինանցն նշի»:

Լ. Հարությունյանը մեկնաբանում է դարաբարցու սիրո առնդժվածը՝ հենվելով բանահավաքներից լսած բազմաթիվ պատմությունների վրա:

Ըստ դարաբարյան ավանդության ամուսնական հարցը ամենապատասխանատու և ամենասդվար հարցն է: Պատահականությունները չպետք է ընտանիք կազմելու հիմք դառնան: Պատահական չի «Մուկունն ու տոռնը» գրույցի զարդարը: Մուկը խաբում է տոռնին: Վերջինս նստում է մկան բնի մոտ, սպասում նրան: «Էնքան ա նշում, մինչև ումեղը կտրում ա: Ասում ա՝ իմ դանզլա խելքս, ամեն պաշու կհավատա՞ն, վեր ես հվլտացե»: Սա ընտանեկան բարոյականության փիլիսոփայություն է: Ընտանեկան սովորությունների հիմքում դրված են ամուր, անխախտ օրենքներ: Այդ են վկայում Լ. Հարությունյանի «Նշխարների» բազմաթիվ գրույցներն ու ավանդությունները: Դարաբարցին կարող է ներել տղամարդու և կնոջ յուրաքանչյուր թերություն, բացի անբարոյականությունից, անհավատարմությունից: Բազում պատումներ, գրառած գրույցներ, ասույթներ վկայում են ընտանեկան սրբությունների, օջախի ամրության մասին:

«Մարթին անա մրթավետ բդի կյա», «Խնդենին տակուն էլ թթենու պատվաստը չի ընդունի», «Աստուծ ամեն մարթու լրած ուրան առաջը պիրի», «Մինը Քյուրն ընի, մինը՝ Արաքսը, ըրարին, վրարին, բարու կյան, բրանան, մին պերցու ծրանան», «Ուրուր անա խաչվին, միսիթարվին, լիանան, ծուվանան, վեց քուշտանան»: «Ուրուր անա միշտ տուզնը մնան, լուզ տան, լպտին, կնչկյարմուր կենան» և այլն: Բազմաթիվ օրինանքներ ու բարեմաղթանքներ ունի ժողովուրդը, որոնք վկայում են դարաբարցու հոգու գեղեցկությունը, մարդասիրությունը, բարությունը:

Բանահյուսական տարբեր ժանրերում Լ. Հարությունյանը ընդգծում է արցախցու ապրելու ձևը, նրա հնարամտությունը, կանոնարկված կյանքը, շափի զգացումը, նրախտազիտությունը. (Ամեն ճրու կոյսկավ անցկնալիս սերտդ ուզածին մնանք ճուր խմեն: Կամ դորմի տու ճուր տուսքողեն, համ էլ հոգիու ճրավ լցնի:)

Սրավշըն եխնում,

Սնրավ ըն եխնում:

Կամ՝ Հացեն ստոյլ կերկոխ մեր անել, հարզել պետք է իմանալ», կամ՝ «Ինձ ննդ կանիմ, քնզ տեղ կանիմ» և այլն: Արցախցու նխստուկացը խխս կանոնիկ է, կշռադատված:

«Նշխարների» 4-րդ գրքի «Խրախճանք ու խրախճանականներ» բաժնում զետեղված են հեթանոսական ժամանակներից եկած ժանրեր, Արև-Աստծուն գովերգող կտորներ, շուտասելուկներ, անեծքներ-սպառնալիքներ, հանելուկներ, որոնց ճանաչողական արժեքները մեծ են, այնտեղ տեսնում ենք խոհ, հոգեբանություն, կենցաղ-սովորույթ, վատը չհանդուրժելու բնավորություն:

Նույն ժողովածուի «Օրինանք, մաղթանք, երդում, խրատ և այլն» բաժնում արցախցու կյանքն ընկալելու, լավն ու վատն իրարից զոկելու, մարդուն մնալու, բացասականը չհանդուրժելու գեղեցիկ

օրինակներ կան: Կյանքի ամեն մի երևոյթի մեջ ժողովուրդը փնտրում է լավը, դրականը՝ ընդգծելով մարդուն և մարդկայինը:

Մեր պատմիչները բանահյուսական այլ նյութերի հետ միասին հավաքել են նաև հերիաթներ՝ «առասպելական զրոյց», «իին զրոյց» անվան տակ: Հայտնի ճշմարտություն է, որ հերիաթի ստեղծողն ու պահպանողը ժողովուրդն է: Հերիաթն այնպիսի բանահյուսական ժանր է, որի ֆանտաստիկ տարրերը գրեթե չեն կրկնվում բանահյուսական որևէ ուրիշ ժանրում: Ահա թե ինչու ակնհայտ է նրա կապը դիցարանության հետ: Հերիաթը հարուստ կենսափիլխոփայություն է: Ժամանակի կնիքը կրելով իր վրա, ունի ազգային կյանքի վառ երանգներ: Արցախյան հերիաթները ժողովրդի անկուտրում կամքի, հաստատակամության, ազատասիրական ոգու արտահայտություններ են: Դրանք ժողովրդի կյանքի, կենցաղի հայելին են, նրա հոգեբանության արտահայտությունները: Իրենց հարուստ բովանդակությամբ ուսումնասիրության լայն ասպարեզ են բացում գիտության բոլոր բնագավառների համար: Պատմաբանը, ազգագրագնուր, լեզվաբանը, հնագետը, ճարտարագետը, բնագետը, գրականագետը և այլոք միշտ էլ առատ նյութ են բաղրում հերիաթներից:

Լ. Հարությունյանի հավաքած հերիաթներից «Ծիլկանը» ասըլ և բդասըլ (աշխատասեր և ծույլ) նորայինների մասին է: Այն բացահայտում է չարի դեմ պայքարելու հնարամտությունը, նպատակառող-վածությունը: Օշափը դարձարայան բանահյուսության մեջ չար ուժի մարմնացում է, որի դեմ պայքարում է Ծիլկանը: Օշափը, սակայն, անմիտ է, մարդուց շուտ խարբող: Ասել է, թե ժողովուրդը ամենազորեղն ու զիտակիցը համարում է մարդուն, որի առաջ ամեն չար ուժ նվաստանում է: Հերիաթի վերջում Օշափը խնդուկրակ է, խնդանում է Ծիլկանի հնարամտության առաջ: Հերիաթի վերջին բարյալսրատական իմաստն այն է, որ խնլոքը պիտի իշխի, լավ կլինի, որ «խնլունք խոսքը խնլունք կործ տենուար»:<sup>1</sup>

Հայ ժողովրդական հերիաթների հավաքման ու հրատարակման գործում մնձ է Գ. Սրբանձտյանի, Տ. Նավասարդյանի, Գ. Շնորենցի, Եր. Լալայանի և ուրիշների դերը: Այդ շարքը լրացնում է նաև Լևոն Հարությունյանը, որի հավաքած ու զրի առած հերիաթները պահպանել են պատմական տարբեր ժամանակաշրջանների կենսահայեցողության հետքերը: Այդ հերիաթների որոշ մասում հենդինակը պահպանում է Արցախի բարբառի արտասանական և բնրականական յուրահատկությունները, ժողովրդական պատմելածեր, շատ դեպքերում էլ հերիաթի լեզուն մոտեցրել է գրական լեզվին: Արցախյան հերիաթներում բարությունը, ազնվությունը, արդարությունը, երախտագիտությունը, հովանավորում, պաշտպանվում ու մեծարվում են, իսկ նենգությունը, դաժանությունը, չարությունը՝ դատապարտվում և պատժվում: Հերիաթներում ընդգծվում է հատկապն դրանց բարյալսրական-գաղափարական նպատակադրումը:

Բախտի բերմամբ հարատության տիրացած մարդու կերպարն է «Պիծ ապերը» հերիաթում: Այստեղ էլ ժողովրդի հնարամտությունն է: Զարմանալիորեն այստեղ էլ Օշափը միամիտ է: Սա ժողովրդի ցանկությունն է: Հարությունյանի մշակած իրապատում հերիաթները աչքի են ընկնում պարզությամբ, դեպքերի զարգացման արագ ընթացքով: Իրապատում հերիաթների հիմնական թեման խնլիքի և իմաստության գովասանքն է, բախտն ու ճակատագիրը, արդարության և անարդարության պայքարը: Ազատ ու երջանիկ կյանքի երազանքը հերիաթների ամկյունաբարն է: Լ. Հարությունյանի զրի առած մի շարք հերիաթներ ունեն ասացվածքային վերնագրեր(բարյալսրական): Օր. «Լվոթունը կորչիչի», «Հուվեր մին տա՝ օլստը կատանա» և այլն:

Բարյալսրատական վերջաբան ունի «Լվոթունը կորչիլ չի» հերիաթը: Տղան մեռնին ազատում է անգութ մարդկանց ճանկերից: Մեռնլը նրան լավություն է անում: Այստեղ ժողովուրդը ընդգծել է զավակի վերաբերմունքը, նաև ակնածանքը հոր հանդեպ: Երբ պետք էր շնորհի հոր խրատներից, տղան առանձնանում է և ասում. «Ա հար, ներող ընիս, վեր ըսածադ յան ըմ տամ»: Երևի թե անհաջողության հանդիպեր որդին, եթե չիիշեր հոր պատգամները, և թերևս հայրը չներեր նրան: Բայց քանի որ որդին հիշում է հորը՝ որպես սրբություն, որպես մշտական խորհրդատու, հայրը ներում է նրան: Սա ժողովրդական իմաստություն է՝ սեր ծնողի նկատմամբ, նրա խորհրդների, պատգամների հաշվի առնելը:

<sup>1</sup> «Նշանարներ...», հ. 1, 1991թ. էջ 28:

Հերիաթի սկիզբը բացահայտում է նաև մարդու գթասրտությունը:

Եթք ծննդում են մեռնին, տղան իր գրպանի փողը տալիս է ծննդողներին՝ «Մերիին պարտք ըզանելու համար»:

Ժողովրդական իմաստություն է հերիաթում հոր օրինանքը՝ Ես մեռնում ըմ, քուհոր ուզաղեն ծոյսը երկանիս, օխտը խուսավ հացու նստիս: <sup>1</sup>

«Գրառումներ ծոցատեսրից» ժողովածուում Լ. Հարությունյանը գրում է.

- Բանահյուսությունը ժողովրդի համառոտ կենսագրությունն է (որից ընդարձակը թերևս չկա) ու նաև պատմական հիշողությունը՝ դարձած լեզենդ, ավանդություն, սովորություն կամ ասացվածք»:

Հարուստ նյութի վրա հիմնված մանրակրկիտ ուսումնասիրությունների արդյունք են Լ. Հարությունյանի 5 «Նշխարները», որ տեղ են գտնել երկրամասում ապրող բնիկ ժողովրդի դարավոր ավանդությունների, հերիաթների, զրոյցների նմուշներ, առած-ասացվածքներ, ազգագրական բազմաթիվ նյութեր, երգեր ու ժողովրդական խաղիկներ, զվարճախոսություններ: Անսահման գութ ու գրովաճք են արտահայտում «Կաթնակորենկ» ժողովածուի փորդիկ գրոյցներն ու հերիաթները: «Մոր ձեռքը» գրոյցում մեռնելիս կինը ամուսնուն պատվիրում է երեխաներին որք շըողնելու համար ամուսնանալ, միայն պատվիրում է կտրել իր մի ձեռքը և տանը պահել, որպեսզի խորթ մայրը երեխաներին իր խնդրանքով ծննդի իր խակ ձեռքով: Այդպես էլ վարդում են: Խորթ մայրը չի մոռանում ամուսնու խնդրանքը, երեխաներին ծննդում է իրենց մոր ձեռքով: Քանի ծննդվում, այնքան մեծանում են երեխաները, այնքան առույգ էին լինում: Մի անգամ էլ խորթ մայրը նրանց ծննդում է իր ձեռքով: Երեխաները հյուծվում են, տունը լցվում է թախիծով: Ստիպված խորթ մայրը նրանց շարունակում է ծննդել իրենց մոր ձեռքով: Երեխաները հասակ են առնում, գորգուրում խորթ մորը և տունը լցվում է ուրախությամբ: Ժողովուրդը այս գրոյցում իմաստություն է դրել: Սա մոր սրտի անսահմանության, նրա՝ զավակների հանդեպ տածած սիրո գովք է:

Ժողովրդական անպատճի կենցաղի, մաքուր ու անադարտ սիրո գովք է «Կաթնակորենկ», «Ամեն պաչի կհավատա՞ն», «Խոռվկան լուսինը» գրոյցները: Վերջինում ավանդությունը պատմում է մոր և աղջկա փոխսարաբերության մասին: Մայրը ջղայնանում է չարածճի աղջկա վարքագծի համար, սակայն եթք նրանք բաժանվում են, երկուսն էլ զղում են կատարվածի համար: Ոչ մայրն է կարողանում բարձրանալ երկինք, ոչ աղջիկը՝ իջնել: Բայց երբեք չեն մոռանում իրար: Աղջիկը մնում է նոյն չարածճին, բայց միշտ անուշիկ ժպում է մորը, որ մայրը չտիրի: Իսկ եթք ամպը ծածկում է Լուսի երեսը, մայրը թախծում է աշխարհի չափ:

Հայ ժողովրդական գրոյցները, ի տարբերություն ավանդությունների, իրական պատմություններ են, հավաստի և իրենց մեջ կրում են պատմական անցքերի ու եղանակների արձագանքները: Դրանք անընդհատ մշակվող ստեղծագործություններ են և կրում են պատմողի կնիքը:

«Կաքավը» գրոյցը սովորեցնում է երգով փափկացնել քար սրտերը, թենկուո՞ւ արյան գնով: »Ես առավել անզութ որսկանների համար եմ երգում, զուցե՛ մի երանելի օր էլ... Զարը չի կարող տաղն ու աղոյթը պոկել սրտերից, անուշիկ երգը խլել աշխարհից»,<sup>2</sup> - ասում է կաքավը: Ժողովրդական իմաստության օրինակներ են «Լուծը», «Անթառամի գրոյցը», «Աղքատ հարուստը», «Անքուժելի ցավը»: «Բուն» գրոյցը պատմում է բուի աներենառության մասին՝ խարազանելով ծուլությունը, անաշխատունակությունը: «Երեք մարգարիտ» գրոյցը սովորեցնում է ընդունել ապրողի ազատ գոյությունը, սովորել ապրել ուրիշի ցամերով, սիրել գեղեցկությունը:

- Դրանք մարգարիտներ են, որսորդ, ընդունողի համար:

Ես թեզ չխարճնցի: Ես ի՞նչ անեմ, որ իմ արդար մարգարիտները քո ձեռքում սրելու են դառնում և քո սիրտը խրվում:<sup>3</sup>

Ժողովածուի ասույթները մի-մի իմաստություն են՝ ժողովրդի կենսափորձով հարստացած:

- Ղարաբաղցուն ասացին՝ համար են ու հաստակող: Ասաց՝ են սարի խոտ չեմ, որ պատահած քամին ոլոր-հոլոր անի: Արցախցու բնավորության լավագույն գծերի փառաբանությունն է բանահյուսական նշխարներում:

<sup>1</sup> L. Հարությունյան, Նշխարներ, Երևան, 1991, էջ 35:

<sup>2</sup> «Կաթնակորենկ», էջ 13:

<sup>3</sup> Նոյն տեղում, էջ 19:

Լ. Հարությունյան-բանահավաքը հասուն է քաղաքականապես, քաջածանոյթ է ժողովրդի պատմությանը, նրա դարավոր մշակույթին, նիստ ու կացին, սովորույթներին:

Յուրաքանչյուր պատմվող զրոյցում կամ ասույթներում նա փորձում է ժողովրդի կենսափորձը տարածել հարևան ժողովուրդների հետ հարաբերություններում՝ ընդգծելով արգախուն առավելությունը.

- Մենք մեր քարերին լեզու ենք տալիս, մարդիկ տեսնում ու զարմանքից քարանում են: Մենք մեր քարերին ծաղիկ ենք ցանում, քարը բնրշանում ու ծիծաղում է:

Իսկ դո՞ւ...

Ու՞ր է, թե դուր էլ քար լինեիք...<sup>1</sup>

Դարեն շարունակ հայ ժողովուրդը տիրապաշտ է եղել ու տեսչացել է լավ ու սրտացավ դեկավար: Բայց և ծաղրել է այս դեկավարներին ու առաջնորդներին, ովքեր ապրում են ժողովրդի հաշվին: Ժողովուրդը քննադատում է աշառու դատավորներին, անօրեն օրենքները: Ժողովուրդը ծաղրում է ազահությունը, սիրում արդարությունը: «Թա մարթը՝ ծմրուկու թաղու նման իլ: Պտուղդ թող ինչնչան օգումա՝ տորզի: Ըշխարքն ինտեն»: Կամ «Թնկուզ հարյուր տարվա մարթ ու կնճակ. էիս մարթը կնզանան բոհի հմանչի, կնճակը՝ մարթան: Կամ. «Վեր ուրուշու լվոթունը անում, թամահը մննադ քի, օրինանքը քեզ բոլա»: Զկա ավելի մեծ կատարենլություն բնության մեջ, քան քարի մարդն է: Քարի եղիքը»<sup>2</sup>:

«Խնչ դեղատումներ է առաջարկում ժողովրդական բանահյուսությունը ազգային ցավերը դարմանելու համար» բաժնում հեղինակի նպատակն է «հայաշխարհիկ ավանդույթներով դաստիարակել հայ երեսային. մոր կաթը դարձնել հայրենասիրական բալասան, իսկ բանահյուսությունը պետք է «մեր հավատի զանգի պես ծլնզա մեր սերունդների ականջների մեջ: Հայրենասիրություն: Ահա այն կրակը, որ զորու է մշտաբորբոք վիճակում պահենլու գոյատևման բուրան՝ պապենական հողի վրա, ոչ մի այլ տեսի: Այնտեղ, ուր մեր հարազատների զերեզմաններն են, շեն աղբյուրները, անկրկնելի պտղաշխարհը, խաղողը, գինին, վաղնջական ավանդույթներով հարուստ բնությունը և մեր իմաստուն հավաքականությունը»<sup>3</sup>:

Յուրաքանչյուր բանահյուսական ժամանակը մեջ խոսում է իմաստուն ժողովուրդը: Վկան՝ «Հայի 5 մատները», «Երկու ուղևոր», «Հային նտեն լինլը» և այլն:

Լ. Հարությունյանի պրատուն միտքը պեղում է մեր ինավորց հիշատակարանները, զանազան ասացողների (վաղեմի և այսօրվա) հուշամատյանները և իր իմաստուն խոսքն ասում Արցախի հավատալիքների, կենցաղի, սովորույթների մասին:

«Հայը պետք է գոյատևի զենքով, արարելով, գրով ու լեզվով, ամենազոր գիտությամբ, ամենախսու արվեստով, իր աստվածային սովորություններով, սիրով ու միաբանությամբ և իրեն ներհատուկ քարենկամությամբ ու նվիրվածությամբ բոլոր ժողովուրդների հետ: Անցնելիք բովանդակ ճանապարհին չմոռանալով, որ մենքը արարողը նաև խայենի պետք է իմանա, թենկու իր կյանքը կորցնելու գնով»<sup>4</sup>:

Լ. Հարությունյանի բանահյուսական ժողովածուներում զետեղված են բազմաթիվ պատմություններ, որոնք բացահայտում են լնտանիքի ամրությունը, սերը, արմատներին կաշշելու ժողովրդի ոգին: Հնտաքրքիր ու անմոռաց են Հարություն պապի հետ կապված հուշերը («Ճուկվեն հարթնը», «Որ ուսում էիր, այնպես», «Գողերը պատժվեցին», «Երդվիր, որ գողություն չեն անելու» և այլն):

Հնտաքրքիր են բանահյուսական կտորների ընդհանրացումները: Դա Լ. Հարությունյանի հավաքած նշխարներում կատարվում է ժողովրդի հոգուն ու սրտին հոգենեարազատ արտահայտություններով. «Քամին տանտեր դարձավ, տանտերը դարձավ քամի», «Սրտեղ նատեմ, մրոքդ քանդիմ», «Վենանաս տեղ անիմ, տեղդ նեղ անիմ», «Թորքեն վեր տոն տարեր՝ հարթնանն աշկեն կյեշի, տանը զյորին, կումեն ձիին» և այլն: Բազմաթիվ քարոյական խնդիրներ կան ազգային արժեքներում: Դրանցում առկա է ժողովրդի մտահոգություն իր ճակատագրի հանդեպ, քանի որ միշտ էլ գտնվել է քաղաքական կյանքի տարութերումներում, միշտ էլ հայացքը հատն է դեպի ճառագող լույսը: Լուսավոր են ժողովրդի

<sup>1</sup> Նոյն տեղում, էջ 25:

<sup>2</sup> «Նշխարներ...», հ. 4, 2009 թ., էջ 18:

<sup>3</sup> Նոյն տեղում, էջ 22:

<sup>4</sup> «Նշխարներ...» հ. 4, էջ 23:

հորինած զրույցները, ասույթները, անգամ աննձքները, որոնք դաստիարակչական նպատակ են ունեցել:

Լ. Հարությունյանի գրի առած տեղանուններն ու դրանց բացատրությունները լի են հայրենիքի, բնակավայրի, ժողովրդի հանդեպ սիրով ու պատկառանքով:

«Տնդանունն է հողը, սարը, ձորը, բնակավայրը դարձնում հայրենիք: Տնդանունը հողին դաշված մեր հիշողությունն է», - գրում է Լ. Հարությունյանը: Ավանդապաշտ է Արցախին: Ավանդապաշտ է և նշխարների հնդինակը, որը նշում է.

- Որքան բարի են արամեն ժողովուրդ. լավ՝ «մարդու և բնության հանդեպ, այնքան անողոք եղիք, երբ թշնամիդ ջուրդ է պղտորում»:

Կամ՝ «Ձկա ավելի մեծ կատարելություն բնության մեջ, քան բարի մարդն է: Բարի եղիք»:

«Ժողովրդական բանահյուսությունը ստեղծվում է դարերի ընթացքում և ընթանում ժողովրդի հետ համարայլ՝ շարունակ կրկնելով, շարունակ հիշեցնելով, նպատակ ունենալով մաքոր ու անպարտ պահելու նրա ոգին, լավը, շիտակը կրկնելու, սիսալը, անիրավն ու վնասակարը հնոր վանելու հանապազ առաքելությամբ», - գրում է վաստակաշատ բանահավաքն ու բանագնտը:

### Գրականություն

1. Լևոն Հարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսության, Երևան, 1991թ.:
2. Լևոն Հարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսության, զիրք երրորդ, Ստեփանակերտ, 2007թ.:
3. Լևոն Հարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսության, զիրք չորրորդ, Ստեփանակերտ, 2009թ.:
4. Լևոն Հարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսության, զիրք հինգերորդ, Ստեփանակերտ, 2011թ.:
5. Լևոն Հարությունյան, Կաթնակորենկ, Երևան, 1988թ.:
6. Լևոն Հարությունյան, Գրառումներ ծոցատերից, Ստեփանակերտ, 2004թ.:

### Տնդեկություններ հնդինակի մասին

**Անսեհիտ Ալթայան – բ.գ.թ., պրոֆեսոր, ԱրՊԿ հայ գրականության և լրագրության ամբիոն**

E-mail: Atayan2011@rambler.ru

Հոդվածը տպագրության է նրաշխավորեն խմբագրական կողմանից անդամ, բ.գ.դ. Ս. Խանյանը: